ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 2 » հուլիսի 2026 թվականի N:251 - Ա ք. Գյումրի

ԱՂՈՒՆԻԿ ՀԱԶՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածի, 163-րդ հոդվածի, 167-րդ հոդվածի 3-րդ մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N:1392-Ն որոշման 2.2-րդ և 6-րդ կետերի, նույն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N:1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետի դրույթներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի N:798-Ա որոշումը և հիմք ընդունելով Աղունիկ Հազրյանի 2026 թվականի հուլիսի 2-ի դիմումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող Աղունիկ Հազրյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2025 թվականի դեկտեմբերի 30-ի N:798-Ա որոշմամբ տեղափոխված 2025 թվականի ամենամյա երկարացված արձակուրդից մնացած մասը՝ 7 աշխատանքային օր, և ամենամյա երկարացված արձակուրդից 5 աշխատանքային օր՝ 2026 թվականի հուլիսի 6-ից 21-ը ներառյալ:

2. Աղունիկ Հազրյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ամասիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի

գործառույթների իրականացումը վերապահել նույն կազմակերպության տնօրեն Մարինե Ամիրյանին:

Դ.ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է